ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

№ Ե/39/779-25 «30» 10 2025թ.

«ՎԱՐԴԱՆ ՍՄԲԱԹՅԱՆ ՍԻՄՈՆԻ» Ա/Ձ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ՍՄԲԱԹՅԱՆԻՆ
/հասցե՝ ք. Երևան, Էմինեսկու 2 փ., 16 տուն;
էլ. հասցե՝ vardansmbatyan68@mail.ru/

Հարգելի՛ պարոն Սմբատյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Վարդան Սմբաթյան Սիմոնի» Ա/Ձ-ի միջև 2025 թվականի մայիսի 12-ին կնքված ԵՄ-ԳՀԱՇՁԲ-25/44 ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում հետագայում հատկացվել են ֆինանսական միջոցներ և Երևանի քաղաքապետարանի կողմից 10.09.2025թ. ծանուցվել է համաձայնագիր, սակայն սահմանված ժամկետում՝ մինչև 01.10.2025թ. ներառյալ, չի ներկայացվել մասնակցի կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 30-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վարդան Սմբաթյան Սիմոնի» Ա/Ձ-ն պայմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացրել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԳՀԱՇՁԲ-25/44 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 2,250,000.00 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ

"տեղեկատվությունը, համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +374 98389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)